ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

ՎԵՐԱԲԱՑՎԵՑ ՍԱՅԴԱԲԱԴԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ Ս. ՄԱՐԻԱՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Դեկտեմբերի 5-ը նշանակալից օր էր ողջ հնդկահայ գաղութի համար, քանզի հավատացյալների առջև կրկին իր հյուրընկալ դռները բացեց հիմնովին վերանորոգված Սայդաբադի Ս. Մարիամ հայկական եկեղեցին:

1758 թ. ջուղայեցի նշանավոր վաճառական Խոջա Պետրոսի ջանքերով կառուցված եկեղեցին գրեթե կես դար չէր գործում: Բնական աղետների պատճառով զգալիորեն տուժել էր եկեղեցու քարեղեն շինությունը: Սակայն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և Կալկաթայի եկեղեցական վարչության անմիջական ջանքերի շնորհիվ այսօր Ս. Մարիամ եկեղեցին հիմնովին վերանորոգվել է, բարեկարգվել է տարածքը, կառուցվել է նոր զանգակատուն, Հայոց Եկեղեցուն են վերադարձվել նախկինում բռնազավթված տարածքները:

Հնդկահայոց հոգևոր հովիվ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տիգրան սրկ. Բաղումյանը կատարեցին Դռնբացեքի արարողությունը, որից հետո եկեղեցու վերջին խնամակալ տիկին Մերի Կարապետյանի գերեզմանի մոտ կատարվեց հոգեհանգիստ՝ եկեղեցու հիմնադիրների և եկեղեցու տարածքում թաղված հայորդիների հոգիների հանգստության համար: Մասնավոր աղոթք հնչեց Կարապետյան գերդաստանի ննջեցյալների հոգիների խաղաղության համար:

Հոգեհանգստից հետո Օշական վարդապետը շնորհավորեց ամենքին բարեբաստիկ օրվա կապակցությամբ՝ ընդգծելով հայ քրիստոնյայի մշտական ներկայության կարևորությունը երբեմնի հայաշունչ Սայդաբադ քաղաքում: Հայր Սուրբն իր գնահատանքը հայտնեց նաև Կալկաթայի եկեղեցական վարչության անդամներին՝ կատարված աշխատանքի համար:

Ամբողջ օրվա ընթացքում չէր դադարում շրջակա թաղամասերի բնակիչների հոսքը եկեղեցի, որոնցից շատերը բազմաթիվ հետաքրքիր դրվագներ էին ներկայացնում եկեղեցու անցյալի մասին:

Արարողությանը ներկա էին եկեղեցական վարչության անդամներ, հնդկահայեր, ԱՄՆ-ից և Հունաստանից այս առիթով ժամանած Սայդաբադի հայկական եկեղեցու վերջին խնամակալներ՝ Մատթեոս և Մերի Կարապետյանների թոռնուհիներ՝ տիկին Հեղինե և Սիլվա Կարապետյանները, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ:

Արարողության ավարտից հետո կազմակերպվեց հյուրասիրություն: